# ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ՊՂԻՆՁ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(2023թ. 4-րդ եռամսյակ)

«ԷՆ ԷՌ ԷՄ (ՆԵՅՉՐԼ ՌԻՍՈՐՍ ՄԵՆԵՋՄԵՆԹ)»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



Մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ եռամսյակային հաղորդում (2023 թվականի 4-րդ եռամսյակ)

| Մշտադիտար-կումների օբյեկտը | Մշտադիտարկումների վայրը | Ցուցանիշը | Մշտադիտար-կումների տեսակը | Հաճախա-կանությունը | Արդյունքը |
|---|---|---|---|---|---|
| Մակերևութային ջրեր | Կիշկոշտ գետ | ՀՀ Կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ սահմանված նորմեր | Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն | Շաբաթական մեկ անգամ | Կիշկոշտ գետի ջրերի մշտադիտարկումների միջինացված արդյունքները (տե՛ս ստորև) |

*Կիշկոշտ գետի ջրերի մշտադիտարկումների միջինացված արդյունքները*

| հ/հ | Ցուցանիշ | W1 | W2 | W3 |
|---|---|---|---|---|
| 1. | Ջրածնային ցուցիչ՝ pH | 7.704 | 7.517 | 7.618 |
| 2. | Ընդհանուր լուծված աղեր, մգ/լ | 182 | 372 | 386 |
| 3. | Գունավորում, աստիճան | 0.000 | 0.000 | 0.000 |
| 4. | Հոտ, բալ | 2.0 | 2.0 | 2.0 |
| 5. | Էլ.հաղորդակա-նություն, μS/սմ | 250 | 510 | 530 |
| 6. | $O_2$ մգ/լ | 11.05 | 11.04 | 10.92 |
| 7. | As, մգ/լ | 0.000 | ≤0.001 | 0.000 |
| 8. | Sb, մգ/լ | 0.000 | 0.000 | <0.001 |
| 9. | Cu, մգ/լ | 0.0023 | 0.0059 | 0.011 |
| 10. | Zn, մգ/լ | 0.017 | 0.0071 | 0.014 |
| 11. | Pb, մգ/լ | 0.012 | 0.024 | 0.02 |
| 12. | Fe, մգ/լ | 0.054 | 0.042 | 0.073 |
| 13. | Co, մգ/լ | 0.000 | 0.000 | 0.000 |
| 14. | Ni, մգ/լ | 0.000 | 0.000 | 0.000 |
| 15. | Cd, մգ/լ | 0.000 | 0.000 | 0.000 |
| 16. | Mn, մգ/լ | 0.01 | 0.0040 | 0.0076 |
| 17. | Cr, մգ/լ | 0.000 | 0.000 | 0.000 |
| 18. | Al, մգ/լ | 0.075 | ≤0.03 | ≤0.03 |
| 19. | K, մգ/լ | 1.00 | 1.26 | 1.26 |
| 20. | Na, մգ/լ | 2.54 | 5.93 | 4.95 |
| 21. | Mo, մգ/լ | 0.000 | 0.087 | 0.280 |
| 22. | Ca, մգ/լ | 32.9 | 84.9 | 81.8 |
| 23. | Mg, մգ/լ | 8.7 | 13.6 | 19.4 |
| 24. | Ամոնիում իոն՝ $NH_4^+$ | 0.000 | 0.000 | 0.000 |
| 25. | Նիտրատ իոն՝ $NO_3^-$ | 0.28 | 0.460 | 0.210 |
| 26. | Նիտրիտ իոն՝ NO2 | 0.011 | 0.017 | 0.016 |

<table>
<tr><th>Մշտադիտար-կումների օբյեկտը</th><th>Մշտադիտարկումների վայրը</th><th>Ցուցանիշը</th><th>Մշտադիտար-կումների տեսակը</th><th>Հաճախա-կանությունը</th><th>Արդյունքը</th></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td>
<table>
<tr><td>27.</td><td>Քլորիդ իոն՝ $Cl^-$</td><td>1.24</td><td>4.26</td><td>2.48</td></tr>
<tr><td>28.</td><td>Սուլֆատ իոն՝ $SO_4^{2-}$</td><td>40.74</td><td>136.10</td><td>165.22</td></tr>
<tr><td>29.</td><td>$P_{ընդհանուր}$, մգ/լ</td><td>0.05</td><td>0.13</td><td>0.09</td></tr>
<tr><td>30.</td><td>Ֆոսֆատ՝ $PO_4^{3-}$, մգ/լ</td><td>0.02</td><td>0.00</td><td>0.00</td></tr>
<tr><td>31.</td><td>ԹՔՊ, մգ$O_2$/լ</td><td>2.0</td><td>2.16</td><td>2.40</td></tr>
<tr><td>32.</td><td>ԹԿՊ, մգ$O_2$/լ</td><td>1.58</td><td>2.3</td><td>3.28</td></tr>
<tr><td>33.</td><td>Հիմնայնություն, մգ-էկվ/լ</td><td>1.7</td><td>2.8</td><td>2.5</td></tr>
<tr><td>34.</td><td>Կոշտություն, մգ-էկվ/լ</td><td>2.4</td><td>5.4</td><td>5.7</td></tr>
<tr><td>35.</td><td>Նավթամթերք, մգ/լ</td><td>0.000</td><td>0.000</td><td>0.000</td></tr>
<tr><td>36.</td><td>Կախյալ մասնիկներ, մգ/լ</td><td>8.8</td><td>9.6</td><td>4.8</td></tr>
<tr><td>37.</td><td>Չոր մնացորդ, մգ/լ</td><td>172</td><td>406</td><td>428</td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>Ստորերկրյա ջրեր</td><td colspan="5">Կիրառելի չէ</td></tr>
<tr><td>Մթնոլորտային օդ</td><td>Երկրաբանական ուսումնասիրությունների համար հատկացված տարածք</td><td>Փոշի (PM 2.5, PM 10),</td><td>Գործիքային չափում</td><td>Շաբաթական մեկ անգամ</td><td>Փոշու մասնիկների մշտադիտարկման եռամսյակային միջինացված արդյունքները
<table>
<tr><th>Դիտակետի անվանում</th><th>Pm 2.5</th><th>Pm 10</th></tr>
<tr><td>D-1</td><td>0.008</td><td>0.073</td></tr>
<tr><td>D-2</td><td>0.009</td><td>0.04</td></tr>
<tr><td>D-3</td><td>0.01</td><td>0.052</td></tr>
<tr><td>D-4</td><td>0.08</td><td>0.039</td></tr>
<tr><td>D-5</td><td>0.007</td><td>0.095</td></tr>
<tr><td>D-6</td><td>0.01</td><td>0.044</td></tr>
<tr><td>D-7</td><td>0.012</td><td>0.055</td></tr>
<tr><td>D-8</td><td>0.009</td><td>0.041</td></tr>
<tr><td>D-9</td><td>0.014</td><td>0.064</td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>Հողային ծածկույթ</td><td>Երկրաբանական ուսումնասիրությունների համար հատկացված տարածք</td><td>- հողերի քիմիական կազմը (pH, կատիոնափոխանակման հատկությունները,</td><td>Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն</td><td>Տարեկան մեկ անգամ</td><td>Ներկայացվել է 2023 թվականի 3-րդ եռամսյակի հաղորդման մեջ</td></tr>
</table>

<table>
<tr><th>Մշտադիտար-կումների օբյեկտը</th><th>Մշտադիտարկումների վայրը</th><th>Ցուցանիշը</th><th>Մշտադիտար-կումների տեսակը</th><th>Հաճախա-կանությունը</th><th>Արդյունքը</th></tr>
<tr><td></td><td></td><td>էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակությունը՝ Fe, Ba, Mn, Zn, Sr, B, Cu, Mo, Cr, Co, Hg, As, Pb, Ni, V, Sb, Se),<br>- հողերի կազմաբանությունը՝ կավի պարունակությունը, բաշխումն ըստ մասնիկների չափերի, ջրակլանումը, ծակոտկենությունը,<br>- հումուսի պարունակությունը,<br>- հողերում<br>- նավթամթերքների պարունակությունը</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ</td><td>Երկրաբանական ուսումնասիրությունների համար հատկացված տարածքի հարակից տարածքներ</td><td>տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն</td><td>Հաշվառում, Նկարագրություն, Քարտեզագրում</td><td>Տարեկան մեկ անգամ</td><td>Արդյունքները ներկայացված են Հավելված 1-ում</td></tr>
<tr><td>Աղմուկ և թրթռում</td><td>Երկրաբանական ուսումնասիրությունների համար հատկացված տարածք</td><td>Աղմուկի մակարդակ</td><td>Գործիքային չափում</td><td>Շաբաթական մեկ անգամ</td><td>Աղմուկի մշտադիտարկման եռամսյակային միջինացված արդյունքները
<table>
<tr><th>Դիտակետի անվանում</th><th>Աղմուկի չափման առավելագույն արդյունքները, դԲ</th><th>Աղմուկի չափման միջինացված արդյունքները, դԲ</th></tr>
<tr><td>N-1</td><td>71.4</td><td>57.6</td></tr>
<tr><td>N-2</td><td>75.5</td><td>58.9</td></tr>
<tr><td>N-3</td><td>69.1</td><td>47.8</td></tr>
</table></td></tr>
</table>

| Մշտադիտարկումների օբյեկտը | Մշտադիտարկումների վայրը | Ցուցանիշը | Մշտադիտարկումների տեսակը | Հաճախականությունը | Արդյունքը | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | N-4 | 72.7 | 64.3 |
| | | | | | N-5 | 63.6 | 54.0 |
| | | | | | N-6 | 67.9 | 50.7 |
| | | | | | N-7 | 74.3 | 62.5 |
| | | | | | N-8 | 78.0 | 59.2 |
| | | | | | N-9 | 75.6 | 61.8 |
| Ոչ վտանգավոր թափոններ | Կիրառելի չէ | | | | | | |
| Վառելանյութի պահեստարաններ | Կիրառելի չէ | | | | | | |
| Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ | Կիրառելի չէ | | | | | | |

Մշտադիտարկումների իրականացման կետերի քարտեզ-սխեմա




D-Փոշու մոնիթորինգի դիտակետեր
S-Հողի մոնիթորինգի դիտակետեր
W-Մակերևութային ջրի (Կիշկոշտ գետ) մոնիթորինգի դիտակետեր
B-Կենսաբազմազանության մոնիթորինգի դիտակետեր

Տեղեկատվությունը ներկայացրեց՝

«Էն Էռ Էմ (Նեյչրլ Ռիսորս Մենջմենթ)» ՓԲԸ, ՀՀ ք. Երևան, 011770707, info@nrm.am
(գտնվելու և գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, կայքը, էլեկտրոնային հասցեն՝ առկայության դեպքում)

Ղեկավար՝

Սամվել Իվանյան
գլխավոր տնօրեն
(պաշտոնը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը, ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

18.01.2024թ.

Հավելված 1

# Կենսաբազմազանության մշտադիտարկման արդյունքներ

«Բիոգեոտեխ» ՍՊԸ

«Էն Էռ Էմ (Նեյչրլ Ռիսորս Մենեջմենթ)» ՓԲ ընկերությանը երկրաբանական ուսումնասիրության իրավունքով հատկացված տարածքում կենսաբազմազանության ուսումնասիրություն

«Բիոգեոտեխ» ՍՊԸ տնօրեն Գարեգին Սևոյան

Հեռ.: +374 93 38 52 21

E-mail: armbiosevoyan@yahoo.com

«ԲԻՈԳԵՈՏԵԽ» "BIOGEOTECH" "БИОГЕОТЕХ" 01264451

ԵՐԵՎԱՆ
2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........ 3

1. ԲՈՒՅՍԵՐ ........ 4

2. ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ........ 32

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ 2023 թ.-ին «Էն Էռ Էմ» ՓԲ ընկերության և «Բիոգեոտեխ» ՍՊ ընկերության միջև կնքված պայմանագրի, իրականացվել են կենսաբազմազանության ուսումնասիրություններ «Էն Էռ Էմ (Նեյչրլ Ռիսորս Մենեջմենթ)» ՓԲ ընկերությանը երկրաբանական ուսումնասիրության իրավունքով հատկացված տարածքում, որոնց հիման վրա կազմվել է հաշվետվություն:

Աշխատանքի ընթացքում իրականացվել է էկոհամակարգերի կենսաբազմազանության ինվենտարիզացիա (գույքագրում):

Կենսաբազմազանության ինվենտարիզացիայի համար իրականացվել է գիտահետազոտական արշավ դեպի հետազոտվող տարածք: Դաշտային աշխատանքների ժամանակ հետազոտվել են բույսերի և կենդանիների տարածվածությունը, կատարվել է փաստացի վիճակի գնահատում, ինչպես նաև հավաքվել են նյութեր հետագա վերլուծությունների համար: Յուրաքանչյուր տեղամաս հետազոտվել է բուսաբանի և կենդանաբանի կողմից: Տվյալների հավաքը ներառել է բնակատեղի բնութագիրը, GPS տվյալների գրանցումը, կենդանիների և բույսերի տեսակների լուսանկարումը: Կատարված հետազոտությունների տվյալները համեմատվել են նույն տարածքում կատարված նախորդ ուսումնասիրությունների և ՀՀ Կարմիր գրքի հետ:

Երթուղային հաշվարկների ժամանակ գրանցվել են կենդանիների անմիջական հանդիպումները, դրանց հետքերի (հողի, ավազի վրա, սննդառության հետ կապված), թաքստոցների, բների և կենսագործունեության արգասիքների առկայությունը: Երկկենցաղների և թռչունների դիտարկումն իրականացվել է նաև ըստ նրանց արձակած ձայների:

Ստացված տվյալների հիման վրա ներկայացվել են եզրակացություններ և առաջարկություններ:

Աշխատանքի հիմքում դրված են եղել ՀՀ օրենսդրական պահանջները, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրություն, ՀՀ Կարմիր գիրք, ՀՀ Օրենքը կենդանական աշխարհի մասին, ՀՀ Օրենքը Բուսական աշխարհի մասին, իրավական այլ ակտեր, որոնցով կարգավորվում է գործունեության ոլորտը, ինչպես նաև միջազգային կոնվենցիաներ, որոնք ստորագրել է Հայաստանի Հանրապետությունը:

# 1. ԲՈՒՅՍԵՐ

2023թ. մայիս ամսին Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար հատկացված 50 հա տարածքում (Նկար 1) մեր կողմից կատարվել է ֆլորայի և բուսականության ուսումնասիրություն: Տարածքը գտնվում է Բարգուշատի լեռնաշղթայի հյուսիսային մակրոլանջերին, 1850-2150 մ բարձրությունների վրա, ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Դաստակերտ քաղաքի շրջակայքում (Նկար 2-7)՝




Նկար 1. Երկրաբանական ուսումնասիրությունների համար հատկացված տարածքը

Ֆլորայի և բուսականության ներկա վիճակի հետազոտման նպատակով կատարվել է ֆլորայի տեսակների գրանցում և բուսատեսակների հավաք (հավաքվել են հերբարիումների մոտ 200 թերթ, կատարվել են ֆոտոլուսանկարներ), լաբորատոր պայմաններում տեսակների կազմը լրացնելու նպատակով:

Տվյալների վերլուծության ժամանակ օգտագործվել են Ա.Ի. Տոլմաչովի (1941, 1970) և Լ.Ի. Մալիշևի (1975, 1987) առաջադրած ֆլորայի քանակական վերլուծության մեթոդները: Տեսակների վերաբերյալ տվյալների աղբյուր են հանդիսացել նաև Հայաստանի ֆլորայի 11 հատորները (Флора Армении, 1954-2009), ՀՀ Բույսերի Կարմիր գիրքը (2010): Բույսերի գիտական անվանումները ճշտվել են ըստ Ս. Չերեպանովի մեթոդական ձեռնարկի (Черепанов, 1995):

Աշխարհագրական կոորդինատները ֆիքսվել են Garmin-2 GPS սարքով, տվյալները վերցված են կոորդինատների տասնորդական համակարգով՝ հետագայում էլեկտրոնային քարտեզների վրա հեշտացված կերպով մուտքագրելու նպատակով: Հետազոտվող տարածքում մարշրուտային մեթոդով կատարվել են բուսականության

նկարագրություն և բուսատեսակների հերբարիումային հավաքներ, տվյալ սեզոնի ֆլորայի կազմը բացահայտելու նպատակով:

Ստեղծվել է բուսատեսակների տվյալների բազա, որում ընդգրկվել են բույսերի տեսակային կազմը, տարածումը ուսումնասիրված հատվածներում, տեսակների կենսաձևերը, «Կարմիր գրքում» ընդգրկվածությունը, էնդեմիզմը, պատկանելիությունը ռելիկտներին և գիտական ու տնտեսական նշանակությունը:



Նկար 2, 3. Դաստակերտի ուսումնասիրվող տարածքները



Նկար 4, 5. Դաստակերտի ուսումնասիրվող տարածքները




Նկար 6, 7. Դաստակերտի ուսումնասիրվող տարածքները

**Բուսականությունը**

Հանքավայրի ուսումնասիրվող տարածքը բուսաշխարհագրական տեսակետից պատկանում է Բորեալ ֆլորիստիկ ենթաթագավորության Ցիրկումբորեալ գավառի Կովկասյան ենթագավառի Զանգեզուրի ֆլորիստիկ շրջանին (Թախտաջյան, 1978): Ուսումնասիրվող հատվածների բուսականությունն ունի արտահայտված քսերո-մեզոֆիլ, մեզո-քսերոֆիլ և մեզոֆիլ բնույթ՝ յուրահատուկ են տափաստանները, մարգագետնատափաստանները, մարգագետինները, ինչպես նաև գետամերձ բուսականությունը: Տարածքում տեղ-տեղ արտահայտված է թփուտային, ժայռային և քարացրոնային բուսականությունը: Ֆոնային բուսատեսակները համեմատաբար քիչ են, ֆլորան հիմնականում տարախոտային է: Ուսումնասիրվող տարածքում խիտ անտառներ չկան, բնափայտավոր բուսատեսակները արտահայտված են գիհու, սալորենու, տանձենու, ազնու, մասրենու, տրագականթային գազերի և այլ նոսր աճող ծառերի, թփերի ու կիսաթփերի բուսուտներով (Նկար 2-13):

Խոնավ վայրերում, հոսող ջրերի մեջ աճում են Ֆոնտինալիս և Մարշանցիա մամուռները իսկ Աբիեթինելլա մամուռը տափաստանների և մարգագետինների չոր և կիսաչոր միջավայրերի բնակիչ է (Նկար 14-16):





Նկար 8, 9. Ուսումնասիրվող տարածքի ծառաթփային բուսականությունը





Նկար 10-11. Ուսումնասիրվող տարածքի ծառաթփային բուսականությունը





Նկար 12-13 Տափաստանամարգագետնային բուսականությունը



Նկար 14. Ուսումնասիրվող տարածքի տափաստանային բուսականությունը Abietinella abietina մամուռի բուսուտներով



Նկար 15-16. Ուսումնասիրվող տարածքի ջրային բուսականությունը (*Fontinalis antipyretica, Marchantia polymorpha*)

## Ուսումնասիրվող տարածքի ֆլորան

### Կարգաբանական վերլուծություն

Ուսումնասիրվող տարածքից 2023թ. մայիս ամսին հավաքվել է մոտ 200 թերթ հերբարիում: Բուսատեսակների որոշումները հիմնականում կատարվել են տեղում՝ դաշտային պայմաններում, հերբարիումների հավաքների, ֆոտոլուսանկարների, ինչպես նաև գրականության հիման վրա:

Որոշվել են 275 տեսակ բարձրակարգ բույսեր, որոնք պատկանում են 177 ցեղի, 54 ընտանիքի, 7 դասի, 5 բաժնի (Մամռանմաններ, Պտերանմաններ, Ձիաձետանմաններ, Մերկասերմեր, Ծածկասերմեր /Միաշաքիլավորներ, Երկշաքիլավորներ/): Նշված բարձրակարգ բույսերը բաժանվում են ոչ անոթավոր բարձրակարգ բույսերի (երեք ընտանիք, երեք ցեղ, երեք տեսակ) և անոթավոր բարձրակարգ բույսերի (51 ընտանիք, 174 ցեղ, 272 տեսակ): Ոչ անոթավոր բարձրակարգ բույսերից են Մամռանմանների ներկայացուցիչներ Ֆոնտինալիսը, Աբիեթինելլան և Մարշանցիան (Աղյուսակ 1, 2):

Աղյուսակ

Դաստակերտի ուսումնասիրվող տարածքների ֆլորայի կազմը

| Տաքսոն |
|---|
| **ԲԱՐՁՐԱԿԱՐԳ ԲՈՒՅՍԵՐ** |
| **BRYOPHYTA - ՄԱՄՌԱՆՄԱՆՆԵՐ** |
| **Marchantiaceae - Մարշանցիազգիներ** |
| Marchantia polymorpha L. – Մարշանցիա տարաձև |
| **Fontinalaceae - Ֆոնտինալազգիներ** |
| Fontinalis antipyretica Hedw. – Ֆոնտինալիս հակահրդեհային |
| **Thuidiaceae - Թուիդիազգիներ** |
| Abietinella abietina (Hedw.) Fleisch. – Աբիեթինելլա աբիեթինա |
| **EQUISETOPHYTA - ՁԻԱՁԵՏԵՐ** |
| **Equisetaceae - Ձիաձետազգիներ** |
| Equisetum arvense L. - Ձիաձետ դաշտային |
| Equisetum ramosissimum Dsf. - Ձիաձետ ճյուղավոր |
| **PTEROPHYTA - ՊՏԵՐՆԵՐ** |
| **Aspleniaceae -Ասպլենազգիներ** |
| Asplenium septentrionale (L.) Hoffm. - Ասպլեն հյուսիսային |
| Asplenium trichomanes L. - Ասպլեն մազանման |
| **Dryopteridaceae - Վահանապտերազգիներ** |
| Dryopteris filix-mas (L.) Shott. - Վահանապտեր արական |
| **GYMNOSPERMAE - ՄԵՐԿԱՍԵՐՄԵՐ** |
| **Cupressaceae - Նոճազգիներ** |
| Juniperus oblonga Bieb. - Գիհի երկարատերև |
| **ANGIOSPERMAE - ԾԱԾԿԱՍԵՐՄԵՐ** |
| **Alliaceae - Սոխազգիներ** |
| Allium atroviolaceum Boiss. - Սոխ մուգ մանուշակագույն |
| Allium pseudostrictum Albov - Սոխ կեղծ ցցված |
| Allium schoenoprasum L. - Սոխուկ |
| **Amaranthaceae - Հավակատարազգիներ** |
| Amaranthus retroflexux L. - Հավակատար սովորական |
| **Apiaceae - Հովանոցազգիներ** |
| Astrodaucus orientalis (L.) Drude - Աստղազազար արևելյան |
| Chaerophyllum aureum L. - Շուշանբանջար ոսկեզօծ |
| Eryngium billardieri Delaroche - Երնջնակ Բիլարդեի |

| |
|---|
| Falcaria vulgaris Bernh. - Սիբեխ սովորական |
| Heracleum schelkovnikovii Woronow - Բալդրղան Շելկովնիկովի |
| Prangos ferulacea (L.) Lindl. - Պրանգոս նարդեսանման |
| **Asteraceae - Բարդածաղկավորներ** |
| Achillea millefolium L. - Հազարատերևուկ սովորական |
| Aetheopappus pulcherrimus (Willd.) Cass. - Երկնափուփուլ գեղեցկագույն |
| Anthemis iberica Bieb. - Անթեմ իբերիական |
| Anthemis triumfettii (L.) All. - Անթեմ Տրիումֆետիի |
| Arctium lappa L. - Կռծոծ, Կռատուկ երեսնակ |
| Artemisia absinthium L. - Օշինդր դառը |
| Artemisia splendens Willd. - Օշինդր փայլուն |
| Carduus nutans L. - Տատասկափուշ խոնարհված |
| Centaurea cheiranthifolia Willd. - Տերեփուկ դեղնամանուշակագույն |
| Centaurea depressa Bieb. - Տերեփուկ սեղմված |
| Centaurea salicifolia Bieb. - Տերեփուկ ուռատերև |
| Centaurea solstitialis L. - Տերեփուկ արևային |
| Cichorium intybus L. - Եղերդակ, Ճարճատուկ սովորական |
| Cirsium aduncum Fisch. et C.A. Mey. ex DC. - Գեղավեր, Տատասկ կեռանման |
| Cirsium echinus (Bieb.) Hand.-Mazz. - Գեղավեր, Տատասկ ասեղնավոր |
| Cirsium obvallatum (Bieb.) Fisch. - Գեղավեր, Տատասկ պարուրված |
| Cirsium tomentosum C.A. Mey. - Գեղավեր, Տատասկ թաղիքավոր |
| Cousinia cynaroides (Bieb.) C.A. Mey. - Խոզանափուշ կանգկուրանման |
| Cousinia gigantolepis Rech. fil. - Խոզանափուշ խոշորաթեփուկ |
| Crepis foetida L. - Ջամբյուղախոտ գարշահոտ |
| Crepis sahendi Boiss et Buhse - Ջամբյուղախոտ սահենդյան |
| Doronicum oblongifolium DC. - Դարունաճ, Դորոնիկում երկարատերև |
| Echinops pungens Trautv. - Թոփփուշ, Ոզնագլխիկ փշոտ |
| Echinops sphaerocephalus L. - Թոփփուշ, Ոզնագլխիկ գնդագլխիկավոր |
| Erigeron acer L. - Գարնանաթարամ կծու |
| Erigeron venustus Botsch. - Գարնանաթարամ գեղեցիկ |
| Grossheimia macrocephala (Muss.-Puschk. ex willd.) Sosn. et Takht. - Գրոսհեյմիա խոշորագլուխ |
| Helichrysum graveolens (Bieb.) Sweet - Անթառամ բուրավետ |
| Helichrysum plicatum DC. - Անթառամ ծալքավոր |
| Hieracium cymosum L. - Ճուռակախոտ հովանոցանման |

| |
|---|
| Hieracium murorum L. - Ճուռակախոտ ժայռային |
| Hieracium pilosella L. - Ճուռակախոտ մազմզոտ |
| Hieracium umbellatum L. - Ճուռակախոտ հովանոցավոր |
| Hieracium virosum Pall. - Ճուռակախոտ թունավոր |
| Inula helenium L. - Կղմուխ մեծ |
| Inula oculus-christi L. - Կղմուխ ակնավոր |
| Lactuca serriola L. - Մառոլ, Հազար, Կաթնուկ կողմնացույց |
| Lapsana grandiflora Bieb. - Խարբուկ խոշորածաղիկ |
| Leontodon hispidus L. - Առյուծատամ խոզանավոր |
| Picris hieracioides L. - Գինեղեզ, Դառնիճ ճուռակախոտանման |
| Podospermum meyeri C. Koch. - Սերմնոտուկ Մեյերի |
| Scorzonera rigida Auch. ex DC. - Խինձ կոշտ |
| Senecio integrifolius (L.) Clairv. - Հալևորուկ ամբողջատերև |
| Solidago virgaurea L. - Ոսկեշիվ սովորական |
| Tanacetum balsamitoides (Nabel.) Chandjian - Տարկավան, Լվածաղիկ բալզամակիրանման |
| Tanacetum chiliophyllum (Fisch. et C.A. Mey. ex DC.) Sch. Bip. - Տարկավան, Լվածաղիկ հազարատերև |
| Tanacetum parthenium (L.) Sch. Bip. - Տարկավան, Լվածաղիկ կուսատերև |
| Taraxacum bessarabicum (Hornem.) Hand.-Mazz. - Խատուտիկ բեսարաբիական |
| Taraxacum montanum (C.A. Mey.) DC. - Խատուտիկ լեռնային |
| Taraxacum stevenii DC. - Խատուտիկ Ստեվենի |
| Tragopogon reticulatus Boiss. et Huet - Այծեմորուս, Սինձ ցանցավոր |
| Xeranthemum squarrosum Boiss. - Չորաբույս, Անմեռուկ չռված |
| **Boraginaceae -Գաղտրիկազգիներ** |
| Cerinthe minor L. - Մոմախոտ փոքր |
| Echium vulgare L. - Իժախոտ սովորական |
| Myosotis alpestris F.W. Schmidt. - Անմոռուկ ալպեստրիս |
| Myosotis sylvatica Ehrh. ex Hoffm. - Անմոռուկ անտառային |
| Onosma setosa Ledeb. - Իշհոտոտ խոզանավոր |
| **Brassicaceae - Խաչածաղկավորներ** |
| Alyssum desertorum Stapf. - Վառվռուկ անապատային |
| Alyssum persicum Boiss. - Վառվռուկ պարսկական |
| Alyssum tortuosum Waldst. et Kit. ex Willd. - Վառվռուկ, Փարա-փարա-ավել |
| Arabis caucasica Schlecht. - Արաբախոտ կովկասյան |

| |
|---|
| Capsella bursa-pastoris (L.) Medik. - Ծտապաշար, Հովվամաղախ |
| Draba bruniifolia Stev. - Ճարտարուկ ծործորակատերն |
| Erysimum gelidum Bunge - Զազախոտ սառը |
| Lepidum latifolium L. - Նվարդակ լայնատերև |
| Nasturtium officinale R. Br. - Ջրկոտեմ դեղատու |
| Thlaspi arvense L. - Շնկոտեմ դաշտային |
| Thlaspi perfoliatum L. - Շնկոտեմ թափանցված |
| **Campanulaceae - Զանգակազգիներ** |
| Campanula aucheri A. DC. - Զանգակ Օշեի |
| Campanula glomerata L. subsp. caucasica (Trautv.) Oganesian - Զանգակ |
| Campanula stevenii Bieb. subsp. stevenii - Զանգակ Ստևենի |
| **Caprifoliaceae - Ցախակեռասազգիներ** |
| Viburnum lantana L. - Գերիմաստի |
| **Caryophyllaceae - Մեխակազգիներ** |
| Cerastium elbrusense Boiss. - Ճոճռուկ էլբրուսի |
| Dianthus cretaceus Adams - Մեխակ կավճային |
| Arenaria gypsophiloides L. - Որմնաբույս սապնարմատանման |
| Gypsophila tenuifolia Bieb. - Սապնարմատ նեղատերև |
| Minuartia imbricata (Bieb.) Woronow - Մինուարցիա կղմինդրաձև |
| Silene caucasica (Bunge) Boiss. - Ծվծվուկ կովկասյան |
| Silene ruprechtii Schischk. - Ծվծվուկ Ռուպրեխտի |
| **Chenopodiaceae - Թելուկազգիներ** |
| Atriplex turcomanica F. et M. - Թալ թուրքմենական |
| Chenopodium album L. - Թելուկ սպիտակ /կամ սովորական/ |
| Chenopodium foliosum Aschers. - Թելուկ բազմատերև |
| **Colchicaceae - Շնդեղազգիներ** |
| Merendera trigyna (Steven ex Adam) Stapf - Խլոպուզ, Ձնծաղիկ եռավարսանդ |
| **Convolvulaceae - Պատատուկազգիներ** |
| Convolvulus arvensis L. - Պատատուկ դաշտային |
| **Crassulaceae - Թանձրատերևազգիներ** |
| Sedum caucasicum (Grossh.) A. Bor. - Թանթռնիկ կովկասյան |
| Sedum oppositifolium Sims. - Թանթռնիկ հակադրատերև |
| Sempervivum transcaucasicum Muirhead - Գառանդմակ անդրկովկասյան |
| **Cucurbitaceae - Դդմազգիներ** |
| Bryonia alba L. - Լոշտակ սպիտակ |

| | |
|---|---|
| **Cuscutaceae - Գաղձազգիներ** | |
| Cuscuta cesattiana Bertol. - Գայլխոտ, Գաղձ Ցեզատի | |
| **Cyperaceae - Բոշխազգիներ** | |
| Carex supina Willd. ex Wahlenb. - Բոշխ կարճահասակ | |
| Scirpus sylvaticus L. - Շամբի անտառային | |
| **Dipsacaceae - Ակքանազգիներ** | |
| Cephalaria gigantea (Ledeb.) Bobr. - Ջիվան հսկայական | |
| Scabiosa bipinnata C. Koch - Քոսքուկ կրկնափետրաձև | |
| Scabiosa caucasica Bieb. - Քոսքուկ կովկասյան | |
| **Euphorbiaceae - Իշակաթնուկազգիներ** | |
| Euphorbia helioscopia L. - Իշակաթնուկ արևատես | |
| Euphorbia iberica Boiss. - Իշակաթնուկ վրացական /իբերիական/ | |
| Euphorbia sequierana Neck. - Իշակաթնուկ Սեգիերի | |
| **Fabaceae - Լոբազգիներ** | |
| Anthyllis vulneraria L. - Վիրախոտ վիրավորված | |
| Astracantha aurea (Willd.) Podlech - Գազ ոսկեզօծ | |
| Astragalus incertus Ledeb. - Գազ անորոշ | |
| Astracantha microcephalus Willd. - Գազ մանրագլխիկ | |
| Astragalus polygala Pall. - Գազ կաթնախոտի | |
| Lathyrus cyaneus (Stev.) C. Koch - Տափոլոռ | |
| Lathyrus miniatus Bieb. ex Stev. - Տափոլոռ զինջարակագույն | |
| Lotus caucasicus Kuprian. ex Juz. - Եղջերառվույտ կովկասյան | |
| Medicago grandiflora (Grossh.) Vass. - Առվույտ խոշորածաղիկ | |
| Medicago sativa L. - Առվույտ ցանովի | |
| Melilotus officinalis (L.) Pall. - Իշառվույտ դեղատու | |
| Oxytropis albana Stev. - Գառնառվույտ ալբանական | |
| Securigera varia (L.) Lassen subsp. hirta (Bunge ex Boiss.) Czer. – Քարառվույտ երփներանգ | |
| Trifolium alpestre L. - Երեքնուկ ալպյան | |
| Trifolium ambiguum M. Bieb. - Երեքնուկ նման | |
| Trifolium canescens Willd. - Երեքնուկ ալեհեր | |
| Trifolium pratense L. var geniculatum R. et F. - Երեքնուկ մարգագետնային | |
| Trifolium repens L. - Երեքնուկ սողացող | |
| Trifolium trichocephalum Bieb. - Երեքնուկ մազմզոտագլուխ | |
| Vicia alpestris Stev. - Գյուլուլ, Վիկ լեռնային | |

| |
|---|
| Vicia sativa L. - Գյուլուլ, Վիկ ցանովի |
| Vicia tenuifolia Roth - Գյուլուլ, Վիկ նեղատերև |
| **Fumariaceae - Ծխաբույսազգիներ** |
| Fumaria schleicheri Soy.-Willem. - Ծխաբույս, Տերուկ Շլեխտերի |
| **Gentianaceae - Բոցազգիներ** |
| Gentiana cruciata L. - Օձի դեղ, Բոց խաչաձադիկ |
| Gentiana gelida Bieb. - Օձի դեղ, Բոց ցրտակայուն |
| Gentiana pontica Soltok. - Օձի դեղ, Բոց պոնտական |
| Gentiana septemfida Pall. - Օձի դեղ, Բոց յոթաբաժան |
| **Geraniaceae - Խորդենազգիներ** |
| Erodium cicutarum (L.) L'Her. - Ճայկտուց խնդամոլային |
| Geranium sylvaticum L. - Խորդենի անտառային |
| **Hyacinthaceae - Հակինթազգիներ** |
| Muscari neglectum Guss. - Պապլոր չնկատված |
| Ornithogalum montanum Cirillo - Սպիտակ բանջար, Աստղաշուշան լեռնային |
| Puschkinia scilloides Adam - Պուշկինիա մկնասոխանման |
| Scilla armena Grossh. - Մկնասոխ հայկական |
| **Hypericaceae - Արոհունդազգիներ** |
| Hypericum perforatum L. - Արոհունդ խոցված |
| **Iridaceae - Հիրիկազգիներ** |
| Iris imbricata Lindl. - Հիրիկ կղմինդրային |
| **Juncaceae - Կնյունազգիներ** |
| Juncus effusus L. - Կնյուն բաժանված |
| Juncus filiformis L. - Կնյուն թելանման |
| Juncus inflexus L. - Կնյուն կռացած |
| Luzula spicata (L.) DC. - Փայլուկ հասկավոր |
| Luzula stenophylla Steud. - Փայլուկ նեղատերև |
| **Lamiaceae - Շրթնածաղկավորներ** |
| Ajuga chia Schreb. - Ճանկխոտ հիոսական |
| Ajuga genevensis L. - Ճանկխոտ ժնևյան |
| Ballota nigra L. - Պրասխ սև |
| Betonica orientalis L. - Թթվիճ արևելյան |
| Lamium album L. - Խուլ եղինջ սպիտակ |
| Leonurus cardiaca L. - Առյուծագի սովորական |
| Mentha longifolia (L.) Huds. - Անանուխ, Դաղձ երկարատերև |

| |
|---|
| Nepeta betonicifolia C.A. Mey. - Կատվաղաձ կասարոնատերև |
| Nepeta grandiflora Bieb. - Կատվաղաձ խոշորածաղիկ |
| Nepeta mussinii Spreng. - Կատվաղաձ Մուսինի |
| Origanum vulgare L. - Խնկածաղիկ սովորական |
| Salvia armeniaca (Bordz.) Grossh. - Եղեսպակ հայկական |
| Salvia verticillata L. - Եղեսպակ օղակաձև |
| Scutellaria orientalis L. - Սաղավարտուկ արևելյան |
| Stachys atherocalyx K. Koch - Արեղախոտ քիստաբաժակ |
| Stachys balansae Boiss. et Kotschy ex Boiss. - Արեղախոտ Բալանզայի |
| Stachys lavandulifolia Vahl - Արեղախոտ փարանկամաշկատերև |
| Teucrium orientale L. - Լերդախոտ արևելյան |
| Teucrium polium L. - Լերդախոտ ալեհեր |
| Thymus collinus Bieb. - Ուրց բլրակային |
| Thymus kotschyanus Boiss. et Hohen. - Ուրց Կոչիի |
| Thymus transcaucasicus Ronn. - Ուրց անդրկովկասյան |
| Ziziphora biebersteiniana (Grossh.) Grossh. - Ուրցաղաձ Բիբերշտեյնի |
| Ziziphora rigida (Boiss.) Stapf - Ուրցաղաձ կոշտ |
| **Liliaceae - Շուշանազգիներ** |
| Gagea confusa A. Terracc. - Սագասոխուկ անորոշ |
| **Malvaceae - Փիփերթազգիներ** |
| Malva neglecta Wallr. - Մոլոշ, Փիփերթ արհամարհված |
| **Onagraceae - Ապուզանազգիներ** |
| Epilobium hirsutum L. - Ապուզան թավոտ |
| **Orchidaceae - Խոլորձազգիներ** |
| Dactylorhiza urvilleana (Steud.) H. Baumann et Kunkele - Դակտիլորիզ Ուրվիլի |
| Orchis mascula (L.) L. - Խոլորձ արական |
| **Papaveraceae - Կակաչազգիներ** |
| Papaver fugax Poir. - Կակաչ թռչող |
| Papaver orientale L. - Կակաչ արևելյան |
| **Plantaginaceae - Ջղախոտազգիներ** |
| Plantago atrata Hoppe - Ջղախոտ, Եզան լեզու սևացող |
| Plantago major L. - Ջղախոտ, Եզան լեզու մեծ |
| **Poaceae - Հացազգիներ** |
| Agrostis capillaris L. - Դաշտախոտուկ, Ագրխոտուկ մազանման |
| Agrostis gigantea Roth - Դաշտախոտուկ, Ագրխոտուկ հսկայական |

| |
|---|
| Alopecurus aequalis Sobol. - Աղվեսախոտ, Աղվեսագի հարթ |
| Alopecurus aucheri Boiss. - Աղվեսախոտ, Աղվեսագի Օշեի |
| Anthoxanthum odoratum L. - Խմրախոտ բուրավետ |
| Avena fatua L. - Խրբուկ, Վարսակ դատարկ, Վ. պոչուկ |
| Briza elatior L. - Դողդողուն բարձր |
| Bromopsis erecta (Huds.) Fourr. - Բրոմոպսիս ուղիղ |
| Bromopsis villosula (Steud.) Holub - Բրոմոպսիս |
| Bromus scoparius L. - Ցորնուկ հուրանավոր |
| Bromus squarrosus L. - Ցորնուկ չռված |
| Catabrosa aquatica (L.) P. Beauv. - Կատաբրոզա ջրային, Ջրազնկոր |
| Catabrosella calvertii (Boiss.) Czerep. - Կատաբրոզելլա Կալվերտի |
| Dactylis glomerata L. - Ոզնախոտ հավաքված |
| Deschampsia cespitosa (L.) P. Beauv. - Մարգագետնախոտ, Դեշանախոտ ճմային |
| Elytrigia trichophora (Link) Nevski - Ձաիր, Սեզ մազակիր |
| Eremopoa songarica (Schrenk) Roshev. - Անապատավլուկ ջունգարական |
| Festuca pratensis Huds. - Շյուղախոտ մարգագետնային |
| Festuca valesiaca Gaudin - Շյուղախոտ վալլիսյան |
| Festuca karabaghensis Musajev - Շյուղախոտ |
| Helictotrichon adjaricum (Albov) Grossh. - Տիվարսակ աջարական |
| Helictotrichon pubescens (Huds.) Besser - Տիվարսակ խավոտ |
| Hordeum bulbosum L. - Գարի սոխուկավոր |
| Hordeum violaceum Boiss. et Huet - Գարի մանուշակագույն |
| Koeleria albovii Domin subsp. albovii - Բարակոտնուկ Ալբովի |
| Milium schmidtianum K. Koch - Վայրի կորեկ Շմիդտի |
| Phalaroides arundinacea (L.) Rauschert - Երկծոպիկ եղեգանման |
| Phleum nodosum L. - Սիզախոտ |
| Phleum phleoides (L.) H. Karst. - Սիզախոտ սիզախոտանման |
| Phragmites australis (Cav.) Trin. ex Steud. - Եղեգ հարավային, Եղեգ սովորական |
| Poa angustifolia L. - Արոտածիլ, Հուրանախոտ, Դաշտավլուկ նեղատերև |
| Poa bulbosa L. - Արոտածիլ, Հուրանախոտ, Դաշտավլուկ սոխուկավոր |
| Poa longifolia Trin. - Արոտածիլ, Հուրանախոտ, Դաշտավլուկ երկարատերև |
| Sesleria phleoides Steven ex Roem. et Schult. - Սեսլերիա սիզախոտանման |
| Stipa pennata L. - Սմբուլ, Փետրախոտ փետրավոր |
| Zingeria pisidica (Boiss.) Tutin - Ցինգերիա պիսիդիական |
| **Polygonaceae - Մատիտեղազգիներ** |

| |
|---|
| Bistorta carnea (C. Koch) Kom. – Մատիտեղ մանդիկ |
| Oxyria digyna (L.) Hill - Թթվախոտ զսպանակավոր |
| Polygonum alpinum All. - Մատիտեղ լեռնային |
| Polygonum aviculare L. - Մատիտեղ ճնճղուկի |
| Rumex acetoselloides Bal. - Ավելուկ ավելուկանման |
| Rumex crispus L. - Ավելուկ գանգուր |
| Primulaceae - Գնարբուկազգիներ |
| Primula macrocalyx Bunge - Գնարբուկ խոշորաբաժակ |
| **Ranunculaceae - Գորտնուկազգիներ** |
| Caltha polypetala Hochst. - Ոսկեծաղիկ բազմածաղկաթերթային |
| Thalictrum minus L. - Քնձմնձուկ փոքր |
| Rhamnaceae - Դժնիկազգիներ |
| Rhamnus cathartica L. - Դժնիկ լուծողական |
| **Rosaceae - Վարդազգիներ** |
| Agrimonia eupatoria L. - Երեսնակ սովորական |
| Alchemilla diversipes Juz. - Գայլաթաթ տարակոթուն |
| Alchemilla grossheimii Juz. - Գայլաթաթ Գրոսհեյմի |
| Alchemilla persica Rothm. - Գայլաթաթ պարսկական |
| Alchemilla retinervis Bus. - Գայլաթաթ ցանցաջղավոր |
| Cotoneaster integerrimus Medik. - Չմենի ամբողջաեզր |
| Cotoneaster saxatilis Pojark. - Չմենի ժայռային |
| Crataegus meyeri Pojark. - Ալոճ, Սզնի Մեյերի |
| Crataegus orientalis Pall. ex Bieb. - Ալոճ, Սզնի արևելյան |
| Filipendula hexapetala Gilib. - Փրփրուկ տափաստանային |
| Fragaria viridis (Duch.) Weston - Ելակ կանաչ |
| Malus orientalis Uglitzk. - Խնձորենի արևելյան |
| Potentilla argentea L. – Մատնունի արզենտի |
| Potentilla argaea Boiss. et Bal. - Մատնունի արգեա |
| Potentilla canescens Bess. - Մատնունի գորշավուն |
| Potentilla recta L. - Մատնունի բարձր |
| Prunus divaricata Ldb. - Սալոր, Շլոր |
| Pyrus caucasica Fed. - Տանձենի կովկասյան |
| Pyrus pseudosyriaca Gladkova x P. salicifolia Pall. - Տանձենի կեղծ-սիրիական |
| Pyrus salicifolia Pall. - Տանձենի ուռենատերև |
| Rosa iberica Stev. ex Bieb. - Մասրենի վրացական |

| |
|---|
| Rosa spinosissima L. - Մասրենի առատափուշ |
| Rosa svanetica Crep. - Մասրենի սվանեթյան |
| Spiraea crenata L. - Ասպիրակ աղեղնեզր |
| Spiraea hypericifolia L. - Ասպիրակ արևքուրիկատերև |
| **Rubiaceae - Տորոնազգիներ** |
| Asperula prostrata (Adams) C. Koch - Գետնաստղ գետնատարած |
| Galium consanguineum Boiss. - Մակարդախոտ |
| **Salicaceae - Ուռենազգիներ** |
| Salix elbursensis Boiss. - Ուռենի էլբուրսյան |
| Salix excelsa S. G. Gmel. - Ուռենի բարձր |
| Salix triandra L. - Ուռենի եռառէջ |
| **Saxifragaceae - Քարբեկազգիներ** |
| Saxifraga cartilaginea Willd. - Քարբեկ կրճկային |
| Saxifraga exarata Vill. - Քարբեկ կոտրվող |
| Saxifraga sibirica - Քարբեկ սիբիրյան |
| **Scrophulariaceae - Խլածաղկազգիներ** |
| Scrophularia olympica Boiss. - Խլածաղիկ օլիմպիական |
| Veronica gentianoides Vahl - Բերենիկե բոգային |
| **Solanaceae - Մորմազգիներ** |
| Hyoscyamus niger L. - Բանգի սև |
| **Urticaceae - Եղինջազգիներ** |
| Urtica dioica L. - Եղինջ երկտուն |
| **Valerianaceae - Կատվախոտազգիներ** |
| Valeriana alliariifolia Adams - Կատվախոտ սխտորուկատերև |
| **Violaceae - Մանուշակազգիներ** |
| Viola arvensis Murr. - Մանուշակ դաշտային |
| Viola odorata L. - Մանուշակ բուրավետ |

Խոշոր կարգաբանական միավորների վերլուծությունից ակնհայտ է, որ ֆլորայում գերակշռում են Ծածկասերմերը՝ որոնցից երկշաքիլավորների դասի ներկայացուցիչները կազմում են 211 տեսակ, միաշաքիլավորները ներկայացված են 55 տեսակով, պտերանմանները և մամռանմանները՝ 3-ական, ձիաձետայինները՝ 2 և մերկասերմերը՝ 1 տեսակով (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Դաստակերտի հետազոտվող տարածքի ֆլորայի կարգաբանական միավորները

| Խոշոր կարգաբանական միավորները | | | Ընտանիքների քանակը | Ցեղերի քանակը | Տեսակների քանակը |
|---|---|---|---|---|---|
| Թագավորություն | Բաժին | Դաս | | | |
| Բույսեր | Մամռանմաններ | Լյարդամամուռներ | 1 | 1 | 1 |
| | | Կանաչ մամուռներ | 2 | 2 | 2 |
| | Ձիաձետանմաններ | Ձիաձետայիններ | 1 | 1 | 2 |
| | Պտերանմաններ | Պտերայիններ | 2 | 2 | 3 |
| | Մերկասերմեր | Փշատերևավորներ | 1 | 1 | 1 |
| | Ծածկասերմեր | Երկշաքիլավորներ | 38 | 132 | 211 |
| | | Միաշաքիլավորներ | 9 | 38 | 55 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 54 | 177 | 275 |

Ֆլորայի ընտանիքների դասավորվածությունը, իր ընդհանուր գծերով, բնորոշ է հնագույն միջերկրածովյան ֆլորաներին, որտեղ տեսակային բազմազանության առումով բարձր դիրք են գրավում Բարդածաղկավորների, Հացազգիների. Շրթնածաղկավորների, Վարդազգիների, Լոբազգիների, Խաչածաղկավորների և այլ ընտանիքները, որոնց բազմաձևությունը հիմնականում պայմանավորված է առաջավորասիական տարածում ունեցող տեսակներով:

Ամենաշատ տեսակներով աչքի են ընկնում Բարդածաղկավորները՝ 52 տեսակ, Հացազգիները՝ 36 տեսակ, Վարդազգիները՝ 25 տեսակ, Շրթնածաղկավորները՝ 24 տեսակ, Լոբազգիները 22 տեսակ և այլն: Ցեղային առումով ևս բազմազանությունը նկատվում է վերոնշյալ ընտանիքներում (Աղյուսակ 3):

Ամենաշատ տեսակներ պարունակում են Trifolium (6 տեսակ), Hieracium (5 տեսակ), Cirsium, Centaurea, Gentiana, Alchemilla, Potentilla (4-ական), Allium, Alyssum, Tanacetum, Taraxacum, Campanula, Euphorbia, Vicia, Juncus, Nepeta, Stachis, Thymus, Festuca, Poa, Pyrus, Rosa, Salix, Saxifraga (3-ական) և այլ ցեղեր (Աղյուսակ 1):

Ուսումնասիրվող տարածքի բնակլիմայական պայմանների համար անհամարժեք է Հովանոցազգիների (Apiaceae) ընտանիքի ցեղերի և տեսակների ցածր քանակը, որը հավանաբար պայմանավորված է տվյալ սեզոնում այս ընտանիքի տեսակների քիչ պահպանվածությամբ և տվյալ վեգետացիոն սեզոնում տարածքի անբավարար ուսումնասիրվածությամբ:

Աղյուսակ 3

Դաստակերտի հետազոտման ենթակա տարածքի ֆլորայի ամենաշատ տեսակներ պարունակող 12 ընտանիքների սպեկտրը

| հ/հ | Ընտանիքներ | Տեսակների քանակը | Ցեղերի քանակը |
|---|---|---|---|
| 1 | Բարդածաղկավորներ-Asteraceae | 52 | 30 |
| 2 | Հացազգիներ-Poaceae | 36 | 25 |
| 3 | Վարդազգիներ-Rosaceae | 25 | 13 |
| 4 | Շրթնածաղկավորներ-Lamiaceae | 24 | 14 |
| 5 | Լոբազգիներ-Fabaceae | 22 | 11 |
| 6 | Խաչածաղկավորներ-Brassicaceae | 11 | 8 |
| 7 | Մեխակազգիներ-Caryophyllaceae | 7 | 6 |
| 8 | Հովանոցազգիներ - Apiaceae | 6 | 6 |
| 9 | Մատիտեղազգիներ - Polygonaceae | 6 | 4 |
| 10 | Գաղտրիկազգիներ - Boraginaceae | 5 | 4 |
| 11 | Կնյունազգիներ - Juncaceae | 5 | 2 |
| 12 | Բոզազգիներ - Gentianaceae | 4 | 1 |

**Ֆլորայի կենսաբանական սպեկտրը**

Դաստակերտի հանքի ուսումնասիրվող տարածքում բույսերի տարբեր կենսաձևերը ներկայացված են հետևյալ հարաբերակցությամբ՝

Ծառեր – 10 տեսակ,

Թփեր – 12 տեսակ,

Կիսաթփեր և կիսաթփիկներ – 8 տեսակ,

Բազմամյա խոտաբույսեր – 199 տեսակ,

Երկամյաներ – 11 տեսակ,

Միամյաներ – 24 տեսակ:

Միամյա-երկամյաներ – 8 տեսակ:

Խոտաբույսերից մեկական տեսակներ ներկայացված են փաթաթվող և պարազիտ կենսաձևերով:

Ուսումնասիրվող տարածքում բազմամյա խոտաբույսերը բացարձակ մեծամասնություն են կազմում, որը բացատրվում է թե՛ տարածքի բուսականության տիպերով (լեռնատափաստաններ և մարգագետիններ) և թե՛ ուսումնասիրման սեզոնով, երբ արդեն շատ միամյաներ և որոշ երկամյա բույսեր ավարտել են իրենց զարգացման ցիկլերը:

Ծառերը քիչ քանակ են կազմում՝ հանդիպելով գլխավորապես գետակների հուների երկարությամբ և քիչ թե շատ խոնավ հյուսիսային, հյուսիս-արևմտյան ու հյուսիս-արևելյան լանջերին, երբեմն՝ քիչ թե շատ մեծ խմբավորումներով:

Թփերը և թփիկները հիմնականում նոսր ձևով հանդիպում են հետազոտվող տարածքի բոլոր հատվածներում՝ դարձյալ գերադասելով համեմատաբար խոնավ ապրելավայրերը:

Գետակների հուներում հանդիպում են մեզոֆիտ և հիդրոֆիտ միամյա և բազմամյա խոտաբույսեր:

**Բուսատեսակների էկոլոգիական առանձնահատկությունները**

Ինչպես ցույց են տալիս տեսակների այս կամ այն սուբստրատին հարմարողականության տվյալները՝ հետազոտվող տարածքում հանդիպող բուսատեսակները բաժանվում են հետևյալ խմբերի. քսերոֆիտներ կամ չորասերներ, քսերո-մեզոֆիտներ կամ չորախոնավասերներ, մեզոֆիտներ կամ խոնավասերներ և հիդրոֆիտներ կամ ջրասերներ:

Տարածքի բուսատեսակների զգալի մասը քսերո-մեզոֆիտներ և մեզո-քսերոֆիտներ են: Սակայն գետակների հուներում և ափերի երկարությամբ բավականին մեծ թիվ են կազմում հիդրոֆիտները:

**Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակները, ֆլորայի էնդեմիզմը և ռելիկտները**

Դաստակերտի հանքավայրի հետազոտվող տարածքում ցուցակագրված 275 տեսակներից մեր կողմից Հայաստանի Հանրապետության Բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել (Հայաստանի բույսերի Կարմիր գիրք, 2010):

Մեկ ենթատեսակ՝ Բարակոտնուկ Ալբովի (*Koeleria albovii* Domin subsp. a*lbovii*) հանդիսանում է Հայաստանի էնդեմ և մեկ տեսակ՝ Տիվարսակ աջարական (*Helictotrichon adjaricum* (Albov) Grossh.)՝ Կովկասի էնդեմ:

Շյուղախոտ վալլիսյան (*Festuca valesiaca* Gaudin) տեսակը հանդիսանում է ռելիկտային տեսակ:

**Տեսակների տնտեսական նշանակությունը, ուսումնասիրվածության աստիճանը, ֆլորայի և բուսականության վիճակը**

Ուսումնասիրվող տարածքում հանդիպում են մարդու համար օգտակար մի շարք բուսատեսակներ: Ըստ նախնական տվյալների՝ տարածքում որոշակի տարածում ունեն ուտելի, համեմունքային, մեղրատու, դեղատու, կերային, տեխնիկական և գեղազարդային նշանակության մի շարք տեսակներ (Նկար 17-42):

Բույսերի ուտելի, թեյի համար օգտագործվող և համեմունքային տեսակներին են պատկանում՝ Սոխուկ (*Allium schoenoprasum*), Ելակ կանաչ (*Fragaria viridis*), - Սիբեխ սովորական (*Falcaria vulgaris*), Ծտապաշար կամ Հովվամաղախ (*Capsella bursa- pastoris*), Կատվադաղձ խոշորածաղիկ (*Nepeta grandiflora*), Ուրց Կոչիի (*Thymus kotschyanus*), Շլորենի (*Prunus divaricata*), Սզնի Մեյերի (*Crataegus meyeri*), Խնձորենի արևելյան (*Malus orientalis*), Տանձենի կովկասյան (*Pyrus caucasica*), Ավելուկ գանգուր (*Rumex crispus*) և այլ տեսակներ: Սննդում օգտագործվում են այս տեսակների կոճղարմատները, ընձյուղները, պտուղները, տերևները ինչպես հում, այնպես էլ վերամշակված ձևով՝ աղցանների, թթու-մարինադների, հրուշակեղենի, ոգելից խմիչքների, թեյերի, հյութերի և այլնի պատրաստման ժամանակ:

Տարածքում քիչ չեն արժեքավոր դեղատու (Ձիաձետ դաշտային (*Equisetum arvense*), Հազարատերևուկ սովորական (*Achillea millefolium*), Ջիվան հսկայական (*Cephalaria gigantea*), Լոշտակ սպիտակ (*Bryonia alba*), Իշառվույտ դեղատու (*Melilotus officinalis*), Արոսենի խոցված (*Hypericum perforatum*), Ճարճատուկ սովորական (*Cichorium intybus*), Դժնիկ լուծողական (*Rhamnus cathartica*), Լերդախոտ ալեհեր (*Teucrium polium*), Խնկածաղիկ սովորական (*Origanum vulgare*) և այլն) բուսատեսակները:

Կուլտուրական բույսերի վայրի ազգակիցները (Սոխ կեղծ ցցված (*Allium pseudostrictum*), Վիկ լեռնային (*Vicia alpestris*), Առվույտ խոշորածաղիկ (*Medicago

*grandiflora*), Գարի սոխուկավոր (*Hordeum bulbosum*) և այլն) ևս բավականին տարածում ունեն ուսումնասիրվող հատվածներում:

Բավական հարուստ են ներկայացված գեղազարդային (Մեխակ կավճային (*Dianthus cretaceus*), Սագասոխուկ անորոշ (*Gagea confusa*), Բոզ ցրտակայուն (*Gentiana gelida*) և այլն), կերային (Տափոլոռ գինջարակագույն (*Lathyrus miniatus*), Poaceae ընտանիքի ներկայացուցիչների մեծ մասը) և տեխնիկական բույսերը (Ձիաձետ ճյուղավոր (*Equisetum ramosissimum*), Գիհի երկարատերև (*Juniperus oblonga*), Ուռենի բարձր (*Salix excelsa*) և այլն) (Նկար 17-42):

Նշված օգտակար տեսակների խմբերի միջև խիստ սահմանափակում չկա՝ շատ տեսակներ միաժամանակ հանդես են գալիս և դեղաբույսային և կերային և սննդային խմբերում: Չնայած տարածքում օգտակար բույսերի առկայությանը, դրանք թե տեսակների քանակով, թե կենսազանգվածով բավականին աղքատ են և բնակչության համար հետաքրքրություն չեն ներկայացնում:




Նկար 17-18. Գիհի երկարատերև (*Juniperus oblonga*) և Ձիաձետ ճյուղավոր (*Equisetum ramosissimum*) տեխնիկական նշանակություն ունեցող բույսերը




Նկար 19-20. Գերիմաստի (*Viburnum lantana*) և Ասպիրակ արևքուրիկատերև (*Spiraea hypericifolia*) թփատեսակները




Նկար 21-22. Սզնի Մեյերի (*Crataegus meyeri*) և Շլորենի (*Prunus divaricata*) ծառատեսակները



Նկար 23-24. Կռատուկ երեսնակ (Arctium lappa) և Գնարբուկ խոշորաբաժակ (*Primula macrocalyx*) օգտակար սննդային, դեղաբույսային և գեղազարդային բուսատեսակները



Նկար 25-26. Ավելուկ ավելուկանման (*Rumex acetoselloides*) և Թթվախոտ զսպանակավոր (*Oxyria digyna*) օգտակար սննդային, դեղաբույսային և գեղազարդային բուսատեսակները



Նկար 27-28. Պրանգոս նարդեսանման (*Prangos ferulacea*) և Եզան լեզու սևացող (*Plantago atrata*) օգտակար դեղաբույսային բուսատեսակները



Նկար 29-30. Կատվախոտ սխտորուկատերև (*Valeriana alliariifolia*) և Ավելուկ գանգուր (*Rumex crispus*) օգտակար սննդային, դեղաբույսային և գեղազարդային բուսատեսակները




Նկար 31-32. Լվածաղիկ հազարատերև (*Tanacetum chiliophyllum*) և Փրփրուկ տափաստանային (*Filipendula hexapetala*) օգտակար սննդային, դեղաբույսային և գեղազարդային բուսատեսակները




Նկար 33-34. Ուրց Կոչիի (*Thymus kotschyanus*) և Ծվծվուկ Ռուպրեխտի (*Silene ruprechtii*) օգտակար սննդային, դեղաբույսային և գեղազարդային բուսատեսակները





Նկար 35-36. Ջիվան հսկայական (*Cephalaria gigantea*) և Ճարճատուկ սովորական (*Cichorium intybus*) օգտակար սննդային, դեղաբույսային և գեղազարդային բուսատեսակները





Նկար 37-38. Դաշտավլուկ սոխուկավոր (*Poa bulbosa*) և Տերեփուկ սեղմված (*Centaurea depressa*) օգտակար կերային և գեղազարդային բուսատեսակները





Նկար 39-40. Բերենիկե բոզային (*Veronica gentianoides*) և Կակաչ արևելյան (*Papaver orientale*) օգտակար գեղազարդային բուսատեսակները





Նկար 41-42. Հիրիկ կղմինդրային (*Iris imbricata*) օգտակար գեղազարդային բուսատեսակը

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Ծատուրյան Թ.Գ., Գևորգյան Մ.Լ. Հայաստանի ուտելի վայրի բույսերը//Երևան, «Լուսակն», 2007. 300 էջ:

Հայաստանի բույսերի Կարմիր գիրք – 2010:

Ղանդիլյան Ա.Պ., Բարսեղյան Ա.Մ. Հայաստանի վայրի ուտելի և համեմունքային բանջարաբույսերի գենոֆոնդը. Երևան, 1999, 48 էջ:

Гроссгейм А.А., Сосновский Д.Н. Опыт ботанико-географического районирования кавказского края / Изв. Тифл., гос. политехн. инст., 1928, 3. 60 с.

Малышев Л.И. Количественный анализ флоры: пространственное разнообразие, уровень видового богатства и репрезентативность участков обследования. Бот.журн., т. 60, № 11, 1975, с. 1537-1550.

Малышев Л.И. Современные подходы к количественному анализу и сравнению флор. В кн.: Теоретические и методические проблемы сравнительной флористики. Ленинград, Наука, 1987, с. 142-148.

Мирзоева Н.В., Ахвердов А.А. Декоративные травянистые растения флоры Армении // Бюллетень Ботанического сада АН АрмССР, 17, 1959. с. 89-109.

Тахтаджян А.Л. Флористические области земли // "Наука", Ленинград, 1978. 248 с.

Толмачев А.И. О количественной характеристике флор и флористических областей. Москва-Ленинград, изд. АН СССР, 1941, 40 с.

